ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱԼԼՈՒՄ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ ՖԱՋՐ

ՖԱԲԻԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ (19-ՐԴ Դ. 2-ՐԴ ԿԵՍ - 20-ՐԴ Դ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՅԱԿ)

Է.00.02. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի

հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ.՝ Ա.Ջ. Կիրակոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ., ակադեմիկոս՝ Մ.Կ. Ջուլալյան

պատմական գիտությունների թեկնածու՝ Մ.Ա. Սողոմոնյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011թ. հուլիսի 6-ին, ժ. 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. հունիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ. Ռ.Պ. Ղազարյան

1.ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունը առաջին հերթին պայմանավորված է ժամանակակից սոցիալիստական գաղափարների և արդի սոցիալիստական կուսակցությունների քաղաքական, իսկ մի շարք երկրների պարագայում (առաջին հերթին նախկին բրիտանական գաղութներում, որոնց քաղաքական զարգացման վրա էական ներազդեցություն է ունեցել անգլիական քաղաքական փիլիսոփայությունը)՝ նաև պետության կայացման ուղեգծի վրա բրիտանական հողում ծագած և ձևավորված սոցիալիստական մոտեցումների հարատև ազդեցությամբ: Գործնական քաղաքականության տեսանկյունից, ֆաբիանական շարժման քաղաքական պայքարի ինստիտուցիոնալ դրսևորումները և սոցիալիստական ընդդիմության մշակույթի տարրերը իրենց անհերքելի հետքն են թողել ժամանակակից բազում պետությունների քաղաքական համակարգերի զարգացման ուղեգծերի վրա: Նախկին բրիտանական գաղութներ հանդիսացող պետություններում, որոնք այժմ ՄԱԿ-ի անդամ-պետությունների մի ստվար զանգված են կազմում, քաղաքակիրթ ընդդիմության ճիշտ կազմակերպման, սկզբունքային կուսակցական հիմնահարցերի պաշտպանության հավասարակշռված մարտավարության ընտրության, քաղաքական ուժերի (կուսակցությունների, շարժումների, ֆրակցիաների և այլն) ներքին կազմակերպման հարցերում անգլիական ֆաբիանականություն թողած ժառանգությունն ակնհայտ է:

Ավելին, նոր ժամանակներում հենց ֆաբիանական սոցիալիզմի ջատագովները առաջիններից մեկը սկսեցին օգտագործել քաղաքական և հասարակական ներգրավման նոր եղանակներ. լայն մտավորական և մշակութային «ձևաչափերի» օգնությամբ քաղաքական հայեցակետերը պրակտիկ քաղաքականության ոլորտներում «ներկայացնելու» մեթոդները, որոնք իրենց էությամբ և ժողովրդավարական էին, և նորարական: Արդի սոցիալիստական քաղաքական մտքի բազմաթիվ նորմատիվային արժեքներ իրենց վրա կրում են ֆաբիանական շարժման սկզբունքների տիրապետությունը, որոնք թեև ժամանակին համընթաց ձևափոխվել են, սակայն շարունակում են իրենց ուրույն տեղն ու դերը պահպանել մեծ քաղաքականության համաղրույթում: Ժամանակակից քաղաքական մշակույթի բովում, առաջին հերթին ձախ կողմնորոշումներ դավանող ուժերի շրջանում, վաղ դասական սոցիալիստական գաղափարներին հղում կատարելը տարածված երևույթ է դարձել, որի կարևոր քաղաքական հանգրվաններից մեկն է ավանդական արժեքների հանդեպ լոյալության ու հավատարմության ի ցույց դնելը: Այս տեսանկյունից ևս, ֆաբիանական Միության ստեղծման և գործունեության մանրակրկիտ

ուսումնասիրությունը, Միության գաղափարական և քաղաքական զարգացման հետագծերի վերլուծությունը, ինչպես նաև ժամանակագրական փուլերի պարբերականացումը կարող է կարևոր նշանակություն ունենալ համեմատական հեռանկարում՝ սոցիալիստական հայեցակարգերի փոխակերպման հետազոտման գործում:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աշխատության գիտահետազոտական նպատակն է Ֆաբիանական միության ձևավորման և զարգացման պատմաքաղաքական համապարփակ և համակարգային վերլուծումը՝ Միության առավել ազդեցիկ մտավորականների՝ գրական գործիչների քաղաքական հայացքների և հայեցակարգերի մեկնաբանման համատեքստում: Հիշյալ նպատակը ենթադրում է հետևյալ հետազոտական խնդիրների լուծում.

- Ընդհանուր սոցիալական և հասարակական-քաղաքական հակասությունների համատեքստի ներկայացումը, որի պայմաններում հասունացավ և սկիզբ առավ ֆաբիանական շարժումը Մեծ Բրիտանիայում: Մասնավորապես, վեր հանել և ցույց տալ այն հիմնական քաղաքական – փիլիսոփայական ուժագծերը, որոնք կոչված էին անշրջելի դարձնելու երկրի հասարակական-քաղաքական թատերաբեմի փոխակերպման գործընթացները, լուսաբանել արհմիութենական շարժման և սոցիալիստական գաղափարախոսության փոխկապակցվածությունն ու դրա ինստիտուցիոնալ արտացոլումը նոր քաղաքական «համաստեղությունների» շահերի հոլովույթում:
- Քննել և վերլուծել ֆաբիանական շարժման, ապա Միության ստեղծման պատմա-քաղաքական առանձնահատկությունները Մ. Բրիտանիայում՝ անդրադառնալով ինչպես քաղաքական-հասարակական շարժառիթների դերակատարությանը, այնպես էլ՝ Միության հիմնական գաղափարական և մարտավարական դրույթների ձևավորման գործընթացում 19-րդ դարավերջի առաջադեմ մտավորականության ներազդեցության հարցին: Հատկապես՝ ուսումնասիրել ականավոր գրող և մտավորական Բ. Շոուի Ֆաբիանական միությանը անդամակցելու պատճառները (1885թ.)՝ մեկնաբանելով վերջինիս հայացքների ազդեցության աստիճանը Միության ծրագրային և մարտավարական գործունեության համատեքստում:
- Պարզաբանել Ֆաբիանական միության անդամների և համակիրների դերակատարությունն անգլիական քաղաքական հրապարակախոսության նոր ուղղությունների ստեղծման գործում, ցույց

տալ գրական և քաղաքական հրապարակախոսության փոխազդեցության ելևէջները ֆաբիանականների միջավայրում, համապարփակ ձևով արտացոլել ֆաբիանականների կողմից կազմակերպված հանրային դասախոսությունների քաղաքական բովանդակությունը և հիշյալ հրապարակային գործունեության հասարակական իմաստավորման ձևերն ու դրսևորումները:

- Քննական մեկնությամբ ներկայացնել առաջադեմ քաղաքական և գրական սոցիալիստական կատարելատիպերի փոխկապվածությունը Մ.Բրիտանիայի հասարակական – քաղաքական կյանքում՝ առանձնացնելով ֆաբիանական շարժման ականավոր գրական գործիչների քաղաքական – փիլիսոփայական հիմնական հայեցակետերը՝ ի դեմս Վ. Մորիսի, Բ. Շոուի և Հ.Ուելսի: Բյուրեղացնել «հեղափոխական» և «գործնական» սոցիալիզմի ջատագովների ներդրումը ֆաբիանական քաղաքական մտքի զարգացման ընթացքի վրա:
- Ներկայացնել ֆաբիանական միությունից դեպի Նոր լեյբորիստական կուսակցության ստեղծման քաղաքական հետագիծը՝ վերլուծելով քաղաքական – հրապարակախոսական մտքի ներազդեցությունը ինստիտուցիոնալ պայքարի անցման ճանապարհին՝ անդրադառնալով անգլիական արհմիութենական շարժման պարագլուխների դերակատարությունն այդ գործընթացում: Հետազոտել Լեյբորիստական կուսակցության գաղափարական հենքի և քաղաքական «ժառանգության» ստեղծման գործում ֆաբիանականների դերակատարության հիմնահարցը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ուսումնասիրության գիտական նորույթը ամենից առաջ կայանում է նրանում, որ ֆաբիանական շարժման, ապա՝ Միության ստեղծումն ու գործունեությունը, ինչպես նաև սոցիալիստական գաղափարախոսության՝ քաղաքական առումով ամրապնդման գործընթացները դիտարկվում են անգլիական գրական-հրապարակախոսական երկտեքստի համադրույթի շրջանակներում: Աշխատության մեթոդաբանական առանձնահատկությունը անխուսափելիորեն ենթադրում է հետազոտական համալիր մոտեցման որդեգրում, ինչն իր արտացոլումն է գտել նաև ատենախոսության միջգիտակարգային բովանդակության մեջ: Թեև մինչ այժմ կատարված հետազոտությունները այս կամ այն չափով անդրադարձել են անգլիական ականավոր գրական գործիչների ավանդին ու ներդրմանը նոր սոցիալիստական կուսակցության պլատֆորմի ձևավորման և առհասարակ մեծ քաղաքականության մեջ մտնելու հարցին, այդուհանդերձ համապարփակ եղանակով ֆաբիանական

շարժման/միության և անգլիական գրական – հրապարակախոսական միջավայրի փոխկապվածության և փոխազդեցության հիմնախնդիրը միայն մասնակի են գիտականորեն լուսաբանվել: Մասնավորապես, ձգտել ենք նորովի ըմբռնել և գիտականորեն հիմնավորել անգլիական գրական աշխարհի և, հատկապես, քաղաքականապես առավել ակտիվ ու ազդեցիկ գրողների ու մտածողների դերակատարությունը ձախ սոցիալիստական միավորումների, իսկ ավելի ուշ նաև կուսակցությունների ինստիտուցիոնալ կայացման ուղու վրա: Միաժամանակ, ձգտելով որոշ չափով հարստացնել նաև գրականագիտական բնագավառը, փորձել ենք վերլուծել և ներկայացնել 19-րդ դարավերջին առավել ակնառու դարձած նոր քաղաքական – իշխանական շահերի ներթափանցումը մտավորականության և հումանիտար մշակույթի ասպարեզ: Վիկտորիանական դարաշրջանի մայրամուտը Անգլիայում, տասնամյակների ընթացքում տիրապետող դասական աշխարհայացքների ջլատումն ու էական վերաիմաստավորումը առավել առարկայացրեցին հասարակական-քաղաքական մտավոր ներուժի մոբիլիզացումը: Սույն աշխատությունն իրենից ներկայացնում է փորձ նորովի հասկանալու և համալիր կերպով ներկայացնելու բրիտանական նոր պատմության դարակազմիկ շրջափուլում մշակութային և քաղաքական արժեքների բարդ, որոշ իմաստով՝ հակասական փոխհարաբերությունները, այդ արժեքները կրողների և արտահայտողների որոշիչ ավանդը նոր քաղաքական ուժի՝ լեյբորիստական կուսակցության վերջնական ինստիտուցիոնալ կազմավորման գործում:

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական տեսանկյունից ատենախոսությունն ընդգրկում է 19-րդ դարի վերջին երեք տասնամյակները և 20-րդ դարասկիզբը՝ ներառելով ֆաբիանական շարժման մեկնարկային փուլից մինչև Լեյբորիստական կուսակցության ստեղծումն ու կայացումն՝ իբրև բրիտանական քաղաքական կյանքի հարատև և ազդեցիկ ուժի:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է հիմնահարցի անաչառ և օբյեկտիվ հետազոտման սկզբունքը: Աշխատությունը գրելիս առաջնորդվել ենք միջգիտակարգային և պատմաքննական մոտեցումներով, որոնք հնարավորություն են ընձեռել

միավորել ընդհանուր գիտական և պատմաքաղաքագիտական մասնագիտական մեթոդների ամբողջությունը, որոնց թվում են պատմական և սոցիալ-մշակութային մեթոդները, նեոինստիտուցիոնալ մոտեցումը, ինչպես նաև համակարգային վերլուծությունը:

Պատմաքննական մեթոդը պահանջել է երևույթների, գործընթացների, միտումների և իրադարձությունների համադրում որոշակի պատմական ժամանակահատվածի հետ: Սոցիալմշակութային մեթոդը հնարավորություն է տվել հետևել և հասկանալ տվյալ ժամանակափուլին տիպական մշակութային առանձնահատկությունների զարգացման հետագծերը՝ հիմնական շեշտը դնելով անգլիական գրական կյանքի «մակընթացությունների» վրա, մինչդեռ նեոինստիտուցիոնալ մոտեցման շրջանակներում վեր հանել հասարակական-քաղաքական կյանքի ինստիտուտների և ոչ պաշտոնական հարթությունների կապը, դրանց յուրատիպությունը՝ բրիտանական պետության և հասարակության քաղաքական նոր աշխարհայացքների կերտման գործընթացում:

Բացի այդ, հեղինակը կարևորել է կենսագրական մեթոդի կիրառումը, որի էությունն է այս կամ այն պատմական գործչի դիտարկումը պատմականության տեսանկյունից՝ նրա հայացքների փոխակերպման համատեքստում: Օգտագործվել են նաև պատմագիտության հատուկ հետազոտության մեթոդներ (պատմական նկարագրում, պրոբլեմային – ժամանակագրական), որոնք, վերոհիշյալ այլ մեթոդների հետ մեկտեղ նպաստել են և ապահովել են դրված խնդիրների համապարփակ լուծումը:

Ելնելով աշխատության պատմագիտական ուղղվածությունից՝ առանձնակի ուշադրություն է հատկացվել էմպիրիկ բնույթի նյութերի ուսումնասիրմանը:

6. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունն ունի գիտական և պատմաճանաչողական նշանակություն: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել բրիտանական վաղ սոցիալիզմի մտավորական և մշակութային կողմերի հետազոտական բնագավառներում, մասնավորապես՝ բրիտանական գրական կյանքի ընթացքն ու ազդեցությունը ներքաղաքական նոր ուրվագծերի ստեղծման լուսաբանման ոլորտում, ականավոր անգլիացի մտավորական գրողների ծանրակշիռ քաղաքական-փիլիսոփայական ժառանգության ուսումնասիրման տեսանկյունից, պատմական հեռանկարում՝ նրանց թողած ժառանգության արժևորման և գնահատման

առումներով: Այն արժեքավոր նյութ կմատակարարի նոր քաղաքական պատմությանը, գրականագիտությանը, ինչպես նաև քաղաքական փիլիսոփայության պատմությանը:

Աշխատության գործնական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ հետազոտական արդյունքները կարող են օգտագործվել Անգլիայի նոր և նորագույն շրջանի, ինչպես նաև արդի ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական շարժումների և բրիտանական լեյբորիզմի պատմությանը վերաբերող ուսումնական ծրագրերի կազմման ընթացքում: Լեյբորիստական կուսակցության քաղաքական ծրագրերի մշակման գործում Ֆաբիանականների ներդրման վերլուծությունը կարող որոշակի օգտակարություն ներկայացնել նաև ժամանակակից կուսակցությունների քաղաքական պլատֆորմների կամ որոշ հայեցակետերի ձևակերպման ընթացքում:

Տեսական արժեքը կապված է սոցիալիստական շարժման հասարակական նոր հենքի զարգացման և անգլիական մտավորական «դասի» քաղաքական ստեղծագործական գործունեության նոր ասպեկտների հետ: Հաշվի առնելով համաշխարհային թատերաբեմում Մեծ Բրիտանիայի քաղաքական և մտավոր նշանակալի ազդեցության փաստը 20-րդ դարասկզբին՝ աշխատությունը կարող է որոշակի տեսական և կիրառական նշանակություն ունենալ ժամանակակից սոցիալիստական կուսակցությունների (ուժերի) գործունեության գաղափարական և գործնական չափումները հասկանալու և արժևորման հարցերում:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը հաստատվել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի «Համաշխարհային պատմություն» ամբիոնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը ֆաբիանական շարժման և Միության ստեղծման քաղաքական պատմությունը եղել է և այժմ էլ շարունակում է

մնալ (այդ թվում նաև 1960թ. հիմնադրված Երիտասարդ ֆաբիանական միության նորագույն պատմությունը) բազմաթիվ գիտնականների և քաղաքական մեկնաբանների ուշադրության կենտրոնում: Ընդհանուր առմամբ ֆաբիանական շարժման հետազոտողների մեծամասնությունը իրավացիորեն ընդգծում էին ֆաբիանական շարժման «մտավորական» լինելու բնույթն ու հանգամանքը՝ որոշ դեպքերում համանմանեցնելով այն աջ լեյբորիզմի հետ: Այդուհանդերձ, մյուս կողմից, հարկ է հաշվի առնել նաև ձախ լեյբորիստների նշանակալի ներդրումը ֆաբիանական գործունեության մեջ:

Տվյալ թեմատիկային վերաբերող գիտական ուսումնասիրությունները, հրապարակախոսական և մամուլի աշխատությունները, որոնցից օգտվել ենք սույն ատենախոսությունը գրելիս, կարելի է տարանջատել մի քանի խմբերի: Դրանց շարքում են. պետական ակտերը, անգլիական հասարակական-քաղաքական և գրական/հրապարակախոսական կյանքին վերաբերող ընդհանուր բնույթի ուսումնասիրությունները, բուն Ֆաբիանական շարժմանն ու միությանը վերաբերող աշխատություններ, ինչպես նաև հենց ֆաբիանական ներկայացուցիչների հրապարակումները, 19-րդ դարավերջի հասարակական ներկայացուցիչների քննադատական հրապարակումները, որոնք զգալի ազդեցություն թողեցին ֆաբիանական ծրագրերի վրա: Առանձին խումբ են կազմում ֆաբիանական հուշագրությունները, նամակները և օրագրերը:

Վիկտորիանական դարաշրջանի ավարտին բնորոշ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական հակասականությունների, 19-րդ դարավերջին սկիզբ առած նոր գործընթացների և առհասարակ մշակութային և հասարակության հարթություններում տեղի ունեցող զարգացումների *(համատեքստի)* պատմաքաղաքական և մեթոդաբանական ուսումնասիրման հիմքերը դրվել են մի շարք դասական աշխատությունների մեջ: Այստեղ, մասնավորապես, արժեքավոր ավանդ ունեն անգլիական քաղաքական մոդերնիզմի հայտնի մասնագետների՝ Ջ.Տրեվելյանի, Ջ.Կոլի, Մ.Բիրը, Ջ.Հոլբրուկի, Ռ.Թաունիի և այլոց դասական գործերը: Այսպես, Ջ.Տրեվելյանի «Անգլիական սոցիալական պատմություն» աշխատությունը խորապես հետազոտում է անգլիական քաղաքական – հասարակական թատերաբեմում 19-րդ դարավերջում ի հայտ եկած նոր սոցիալական ուժերի բովանդակությունը, պատմական հեռանկարում՝ գաղափարական շարժառիթների դերն ու նշանակությունը սոցիալիստական կողմնորոշում դավանող միությունների կազմակերպական զարգացման գործընթացի վրա[1]:

[1] Trevelyan G.M., English Social History, 1982.

Ֆաբիանականության մասին առաջին պատմագիտական աշխատությունը պատկանում է.Պիզի գրչին (1926թ.)՝ «Ֆաբիանական միության պատմությունը», որտեղ առաջին անգամ փորձ է արվում արժևորել անգլիական սոցիալիզմի պատմության մեջ ֆաբիանականության տեղի, դերի և նշանակության մասին թեզը: Ավելի ուշ լույս տեսած ֆաբիանականության պատմությանը վերաբերող գործերում Է.Պիզի ինտերպրետացիոն մոտեցումները ևս շարունակեցին ազդեցիկ մնալ, որոնք, մասնավորապես, ժխտում էին հեղափոխական բնույթի քաղաքական երանգավորումների առկայությունը շարժման սկզբնավորման դրդապատճառների շարքում: Այս տեսակետի կողմնակիցների կարծիքով ֆաբիանական գաղափարախոսության հենքում ընկած էին անգլիական նշանավոր մտածողների՝ Դ.Միլի, Ռ.Օուենի և Գ.Ջորջի լիբերալ «կատարելատիպերը», որոնք անգլիական սոցիալիստական շարժմանը հաղորդեցին շատ ավելի գործնական և ժողովրդավարական բովանդակություն՝ զերծ մնալով գերմանական մարքսիզմի արմատական դիրքորոշումների կարծր ազդեցությունից[2]:

Ֆաբիանականության քաղաքական զարգացման և «մտավորական» հասունացման պատմությունը ներկայացնող մեկ այլ հայտնի գործի հեղինակն է Մ.Քոլը[3]: Ժամանակագրական առումով այն բավականաչափ ընդգրկուն է՝ իր մեջ ներառելով Ֆաբիանական միության ստեղծումից մինչև «Նոր ֆաբիանական ակնարկների» լույս ընծայման ժամանակահատվածի պատմությունը: Աշխատանքը, որում տեղ են գտել նաև հեղինակի անձնական հուշերը, թեև պարունակում է որոշակի վերլուծական մոտեցումներ, սակայն առանձին տեղերում զուրկ է քննադատական մոտեցումից. ակնհայտ է ֆաբիանականների մեծամասնությանը բնորոշ գնահատականների գերակայությունը Լեյբորիստական կուսակցության ստեղծման գործում ֆաբիանականների մասնակցության հարցի շուրջ: Թեև անվիճելի է ֆաբիանականության դերը ժամանակակից բրիտանական քաղաքական համակարգի կայացման գործում, այդուհանդերձ չորս սերունդների ընթացքում միության, նշանակալի քաղաքական ազդեցության մասին պնդումները՝ չափազանցություն են:

Անգլիական պատմագիտության մեջ Ֆաբիանականության թերևս առավել լայն և համակողմանի վերլուծական ակնարկն է ներկայացրել Ա. Մակբրայրը: Նրա կարծիքով ֆաբիանական միության գոյության և գործունեության առանձնահատկություններից մեկն էր մշտական

[2] Pease E.D., History of the Fabian Society, London- New York, F. Cass., 1926, pp.18-27.
[3] Cole M., Beatrice Webb, London, Longman, 1945, The Story of Fabian Socialism, London, Heinemann, 1961.

դիմակայությունը միության տարբեր «խմբավորումների» միջև՝ ըստ Սոցիալիստական դեմոկրատական դաշնության նկատմամբ տածած վերաբերմունքի, ինչն ի վերջո հանգեցնում էր անկախ սոցիալիստական կուսակցության ստեղծելու կամ ստեղծումից զերծ մնալու հարցին[4]: Ա. Մակբրայրի կարծիքով ֆաբիանականներն ըստ էության գտնվում էին Վեբ ամուսինների պոզիտիվիստական մոտեցումների ազդեցության ներքո՝ սահմանափակվելով զուտ գործնական հատվածային բարեփոխումների մշակման նախագծերով[5]:

Անգլիական հասարակության ներսում ընթացող ձախ սոցիալիստական քաղաքական բանավեճի բովանդակությանն ու հիմնական ուղղություններին են անդրադարձել Լ.Լորվինը[6], Հ.Լինդը[7], Վ.Մալլոկը և այլոք[8]: Պատմագրական առանձնահատուկ նշանակություն ունեն հայտնի ֆաբիանական ականավոր գործիչների՝ Վ.Մորիսի, Բ.Շոուի և Հ.Ուելսի կենսագրական աշխատությունները: Անգլիական գրական թատերաբեմի հեղինակավոր ֆաբիանականները անդրադարձել են առաջադեմ քաղաքական և գրական կատարելատիպերի փոխազդեցությանը:

Թեմային անմիջականորեն առնչվող արժեքավոր պատմագրական աշխատությունների շարքին են դասվում ականավոր ֆաբիանական գրողների գործունությունը և հասարակական-քաղաքական հայացքները վեր հանող աղբյուրները[9], ինչպես նաև ֆաբիանական գործիչների հեղինակային աշխատությունները[10]:

---

[4] McBriar A. M., Fabian Socialism and English Politics. 1884–1918. Cambridge, 1962. P. 347–348.

[5] The Book of the Labour Party: Its History, Growth, Policy and Leaders / ed. by H. Tracy. London, 1925. Vol. I., pp.305-306.

[6] Lorwin, Lewis L.: Labor and Internationalism, New York, Macmillan, 1929.

[7] Lynd, Helen Nervell: England in the Eighteen Eighties - Toward a Social Basis for Freedom, OUP, 1945.

[8] Mackenzie, Norman and Jeanne; The First Fabians, London, Widenfeld and Nicholson, 1977, Mallock, W.H.: Labour and the Popular Welfare. A Socialist in a corner a reply to Bernard Shaw, London, Adam and Charles Black, 1894, Morris, William: On Art and Socialism /London, Lehmann, 1947/ The Political Writings of William Morris /ed.: A.L. Morton/, New York, 194-7, International Publishers.

[9] Palffy Istvan: George Bernard Shaw, Magyarorszagon /1904-1956/ /Akademiai Kiado, Budapest, 1987. - Modern Filologiai Fiizetek, p. 40 /, Nethercot, Arthur: The First Five lives of Annie Besant /Chicago, TJCP, 1960/, Moore, Doris Longley: E. Nesbit /London, Macmillan, 1933/, Morris, J. A.: Writers and Politics in Modern Britain /London, Hodder and Stoughton, 1977.

[10] Webb, Sidney: How to Pay for the War, London, Allen and Unwin, 1916, Webb, Beatrice, My apprenticeship, London, 1926, Webb Sidney, What Happened in 1931: A Record. Fabian Tract No. 237, London, 1932, Wells, H.G., Experiment in Autobiography, London, Gollan.cz, 1934/ After Democracy /London, Watts and Co., 1932.

Ֆաբիանական միության ձևավորման և կայացման գործընթացում ինստիտուցիոնալ և սոցիալ-մշակութային գործոնների միացության մասին առարկայական պատկերացումներ կազմելու տեսանկյունից չափազանց հետաքրքրական են հուշագրային բնույթի աղբյուրները: Բ.Վեբի նշանավոր «Օրագրերը» բավականին ուշագրավ և արժեքավոր նյութեր են ներկայացնում ուշ վիկտորիանական դարաշրջանում գրական և մտավորական շրջանակներում տարածված քաղաքական և հասարակական արժեքների մասին, առանձնակի ուշադրության կենտրոնում են նաև Ֆաբիանական միության հարաբերությունները Լեյբորիստական կուսակցության հետ[11]:

Մեր կողմից ընտված թեմատիկայի շրջանակներում՝ անկասկած արժեքավոր նյութ է Բ.Շոույի հիշողությունները, որտեղ նկարագրվում են նաև 1880-ական թթ. ընթացքում այլ հասարակություններում ընթացող սոցիալիստական զարգացումները[12]:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Առաջին գլուխը՝ «Ֆաբիանական սոցիալիզմի հիմքերը» իր մեջ ներառում է երկու ենթագլուխներ՝ «Ուշ վիկտորիանական դարաշրջանի հասարակական միջավայրի հակասությունները և դրանց առանձնահատկությունները» և «Ֆաբիանական սոցիալիզմի նախորդողները»:

Ողջ 19-րդ դարաշրջանի ընթացքում բրիտանական արդյունաբերական և տեխնոլոգիական առաջընթացը, դրա համաշխարհային գերակայությունն ու համբավը նկատելիորեն ներազդում էին, ի թիվս այլոց, նաև բուն անգլիական հասարակության ներսում քաղաքական կայունության ապահովման վրա, մինչդեռ հասարակության ներսում միջդասակարգային տարաձայնությունները շարունակ կրում էին «նիրհող» բնույթ: Սակայն 19-րդ դարի երկրորդ կեսից և, մասնավորապես, դարավերջին սկսեց ակնհայտ դառնալ, որ համաշխարհային արդյունաբերական արտադրության ոլորտում Անգլիայի երբեմնի գերակայող դիրքերը հետնահանջ են ապրում՝ նկատելիորեն նսեմացնելով անգլիական հասարակության շրջանում ազատական գաղափարախոսական հոսանքի գրավչությունը: Դրա հետ

[11] Beatrice Webb Diaries, 1912–1924 / ed. by M.I. Cole. London, 1952, pp. 13–14.
[12] Pearson H., Bernard Shaw. His Life and Personality, London, 1945, p. 111.

մեկտեղ, «զանգվածային ինդուստրիալ» հասարակության ձևավորմանը զուգընթաց՝ աշխատավորական-բանվորական դասակարգի քաղաքական համախմբման ակնհայտ միտումները վերաճում էին միանգամայն բնականոն մի երևույթի: Թեև այս շարժումը հիշյալ ժամանակահատվածում չվերածվեց քաղաքական վերափոխման սկզբունքային շարժիչ ուժի՝ ավելի ուշ այն ծառայեց իբրև նոր սոցիալիստական քաղաքական միավորումների և արհմիությունների ձևավորման շատ կարևոր պլատֆորմ, որտեղ, անշուշտ, իր ուրույն դերակատարությունն ունեցավ նաև այսպես կոչված մտավորական հոսանքը: Անգլիական քաղաքական փիլիսոփայության համադրույթում ուշագրավ և հեռահար իմաստավորում ունեցավ նաև ավանդական տորիների և վիգերի միջև բաժանարար գծերի վերացումը. քաղաքական պայքարում և ապագայի տեսլականների որոշման հարցերում տարբերակման նոր ջրբաժանն անցավ Պահպանողականների և Լեյբորիստների միջև:

Բրիտական արտաքին քաղաքականության ոլորտում ի հայտ եկած մարտահրավերները ոչ պակաս նշանակալի հետևանք ունեցան ներքաղաքական դասավորումների վրա: Անգլիայի մասնակցությունը Ղրիմի պատերազմում (1854-56թթ.) ընդդեմ Ռուսաստանի, իսկ այնուհետև՝ բրիտական քաղաքական վերնախավի անորոշ դիրքորոշումը Ամերիկայի քաղաքացիական պատերազմում (1861-65թթ.) բրիտանական ազգային շահերի ձևակերպման պարագայում՝ էլ ավելի սրեցին բարոյա-քաղաքական հակասությունները անգլիական քաղաքական և մտավորական շրջանակներում: Մի բան ակնհայտ էր՝ տասնամյակներ շարունակ փայփայվող վիկտորիանական կայունության գաղափարը կորցնում էր իր արդիականությունը:

Մայրցամաքային պետությունների՝ առաջին հերթին Գերմանիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից ուժգնացող ճնշումը լրջորեն սասանեցին բրիտանական արդյունաբերական գերակայությունը աշխարհում, վատթարացավ նաև անգլիական գյուղատնտեսության վիճակը: Դիկենսի նովելներում նկարագրված հին և բարի Բրիտանիայի կատարյալ ապրելակերպի տիպը որպես այդպիսին սկսեց խամրել՝ դասակարգային և քաղաքական նոր վերադասավորումների համար լայն ասպարեզ բացելով: Ընդհանուր դժգոհության և սրվող հակասությունների բովում նոր հասարակական երևույթներից մեկը դարձավ տարաբնույթ միությունների, ակումբների և բանավեճային հարթակների ստեղծումը, որտեղ քննարկումներ ծավալվեցին երկրի և հասարակության հեռանկարային զարգացման ուղիների շուրջ: Այդ հասարակական-քաղաքական միավորումների մի զգալի հատվածը երկար կյանք չունեցան, սակայն մյուսները կարողացան պահպանել իրենց գոյությունը՝ ընդլայնելով թե

իրենց անդամների կազմը և թե քաղաքական գրավչությունը: Այդ վերջին խմբին էր պատկանում նաև Ֆաբիանական միությունը:

«Ֆաբիանական սոցիալիզմի նախորդողները» ենթագլխում քննարկվում է Ֆաբիանական միության ստեղծմանը և գաղափարական հենքի ձևավորմանը նախորդած սոցիալիստական մոտեցումների հիմնական կանխադրույթները, դրանց ազդեցությունն ու տարածվածության աստիճանը ինչպես անգլիական մտավորականության, այնպես էլ աշխատավորության ավելի լայն շերտերում: Այստեղ հարկ է նշել, որ վաղ սոցիալիստական մտածողների աշխատություններում որպես այդպիսին բացակայում էր դասակարգային պայքարի մասին գաղափարը, կամ պրոլետարիատի՝ իբրև միասնական ուժի նկարագրությունը: Հիմնական շեշտադրումն էր սեփականության համակարգի պայմաններից և համատեքստից բխող անարդարության և չարաշահումների խնդիրը, որի լուծումը, օրինակ՝ ըստ Օուենի, ենթադրում էր փոքր հանրությունների բարեկեցության բարձրացմանը միտված ջանքերի գործադրում, «լավ» քաղաքացիների համախմբման անհրաժեշտություն և այլն: Ապագան՝ վաղ անգլիական սոցիալիստների համաձայն, պատկանելու էր փոքր համայնքներին, որոնց կազմավորման գործում «Մեծ քաղաքականության» մասնակցությունը պետք է չափազանց սահմանափակ լիներ: Մյուս կողմից, Սեն Սիմոնի ուտոպիստական սոցիալիզմի ջատագովները հակված էին հավատալու, թե ապագան, այնուամենայնիվ, պատկանելու է համակարգային լայն պլանավորման վրա հիմնված հանրություններին, որտեղ կառավարության դերակատարությունը կարող է միանգամայն դրական լինել՝ համագործակցության և մրցակցության առավել «վիճելի» կողմերի վերացման եղանակների օգտագործմամբ:

Ընդհանրացված այս համապատկերում՝ ֆաբիանականների «ներթափանցման» մոտեցումն առավել մոտ էր վաղ ֆրանսիական սոցիալիստական գաղափարներին, թեև բրիտանական ականավոր ուտոպիստ Ռ.Օուենի սկզբունքները էական ազդեցություն թողեցին նրանց քաղաքական պլատֆորմի ձևավորման վրա:

Անգլախոս շրջաններում (առաջին հերթին Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում) տարածված մտավորական մեկ այլ զորեղ հոսանք, որի իրական ազդեցությունը վաղ ֆաբիանական մտքի վրա անժխտելի էր, կապված է Հենրի Ջորջի (1839-97թթ.) հանրահայտ աշխատության հետ: Գրեթե բոլոր վաղ ֆաբիանականները իրենց համարում էին Հ.Ջորջի հետնորդներ: Թե իր հրապարակային ելույթներում և թե «Առաջընթաց և աղքատության» էջերում Հ.Ջորջի գլխավոր հարացույցն էր աղքատության վերացումը վճռական քաղաքական գործողության միջոցով: Ի տարբերություն սոցիալիստների, որոնք հակված էին դեպի փաստացիորեն բաղդադված հասարակության ստեղծումը, Համագործակիցների՝ կամավոր

միությունների մոտեցման կողմնակիցների, պոզիտիվիստների՝ բարոյական համոզման պաշտպանների, Չարտիստների, որոնք սատարում էին ուժային միջոցառումների անխուսափելի անհրաժեշտությունը և հեղափոխական մարքսիստների՝ Հ. Ջորջը հավատացած էր, որ արևմտյան քաղաքական ինստիտուտները ի զորու են «վերաձևաչափվել»՝ ընտրազանգվածի կամքն ընդունելու և իրագործելու նպատակով: Նա համոզված էր, որ մեծամասնության ցանկությունն է սեփական անհատականացված բարեկեցության ապահովումը, ինչն, անշուշտ, հանրության՝ իբրև ամբողջության բարեկեցության ապահովման տեսլական էր ենթադրում: Եվ հենց այս կանխադրույթից էր, որ վաղ ֆաբիանականները բխեցրեցին սեփական ընկալումները՝ հին քաղաքական մեթոդներով նոր հասարակական-քաղաքական ուրվագիծ կերտելու մասին թեզը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Ֆաբիանական միության ծնունդը»** բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում քննարկվում են Ֆաբիանական միության ստեղծմանը նախորդած գործընթացները, մասնավորապես «Նոր կյանք» ընկերակցության անդամների մոտեցումները նոր՝ Ֆաբիանական միության ստեղծման գաղափարի առնչությամբ:

«Նոր կյանք» ընկերակցությունը ստեղծվեց 1883թ. հոկտեմբերին, երբ Էդվարդ Պիսը, լոնդոնյան իր բնակարում, հավաքեց 15 համախոհների՝ քննարկելու և, որոշ իմաստով, ի մի բերելու այդ փոքր հավաքույթի մասնակիցների վերաբերմունքը՝ նոր ընկերակցություն ստեղծելու կապակցությամբ: Հատկանշական է, որ հանդիպման գրեթե բոլոր մասնակիցները «պրովինցիալներ» էին, որոնք ի սկզբանե բավականաչափ մշուշոտ պատկերացումներ ունեին, թե ինչպիսի նպատակներ պետք է հետապնդի ստեղծվելիք ընկերակցությունը: Այդուհանդերձ, առկա էր երիտասարդներին համախմբող մի կարևոր հանգամանք. նրանք արդեն հասցրել էին հիասթափվել անգլիական հասարակական-քաղաքական թատերաբեմում սնկի պես աճող տարաբնույթ մտավորական ակումբների և միությունների անդադար «պրպտումներից», և նրանք բոլորը ցանկանում էին «մտավորական ապրելակերպ» վարել ու փոխել, հնարավորության դեպքում, բարեփոխել նաև հասարակության ապրելաոճը:

«Նոր կյանք» ընկերակցության մասնակիցներից մեկը՝ Բյուրնս-Գիբսոնը ներկայացրեց կազմակերպության նպատակն ու սկզբունքը. կատարելության զարգացումը բոլորի և յուրաքանչյուրի մեջ, սկզբունքը՝ նյութականի ենթարկումը ոգուին: Վերջնական նպատակ ամրագրվեց Հասարակության վերակազմավորումը՝ «բարձրագույն բարոյական նորմերին» համապատասխան: Չնայած նոր միավորման որոշ իմաստով «վերացական» գաղափարական մոտեցումներին՝ իրականության մեջ նրա

անդամները ամբողջությամբ ընդունում էին և գտնվում էին Օուենի ինքնակատարելագործման մասին թեզերի զորեղ ազդեցության ներքո:

Ընկերակցության հիմնումից մի քանի ամիս անց նրա անդամները եկան այն եզրահանգման, որ սոցիալական բարեփոխումների նպատակին հասնելու գործում օրենսդրական գործընթացը ոչ պակաս կարևոր է, քան էթիկական կատարելագործման հրամայականը: Որոշվեց նաև հիմնել նոր կազմակերպություն՝ Ֆաբիանական միությունը, որը «բարեկամական» հարաբերությունների մեջ պետք է գտնվեց «Նոր կյանք» ընկերակցության հետ, մինչ վերջինիս լուծարումը (1898թ.):

Առաջին իսկ բանաձևի համաձայն որոշվեց նոր միությունը կոչել Ֆաբիանական միություն՝ ի պատիվ նշանավոր հռոմեական զորավար Ֆաբիուս Կունկտատորի, ով հայտնի էր դարձել իր հաջողված դանդաղկոտ ռազմական մարտավարությամբ: Նոր միության նպատակ հռչակվեց սոցիալիստական տեսության ուսումնասիրումը և օրախնդիր ու ծանր սոցիալական հիմնախնդիրների լուծման որոնումը: Ի սկզբանե՝ իր ստեղծումից ի վեր Միության գլխավոր առանձնահատկություններից մեկը դարձավ նրա գրեթե բացառիկ մտավորական բնույթը: Ուշագրավ փաստ է. Միության մեջ աշխատավոր դասակարգի միակ ներկայացուցիչն էր ներկարար-բանվոր Ու.Ֆիլիպսը:

Շատ շուտով Միության անդամների շարքում հայտնվեցին պետական ծառայողներ, լրագրողներ և գրողներ, հայտնի դասախոսներ, ինչպես նաև գործարարներ և միջին խավը ներկայացնող այլ անդամներ:

1883թ. սեպտեմբերին Բ.Շոուն դարձավ Ֆաբիանական միության անդամ, իսկ 1885թ.՝ ընդգրկվեց միության կառավարման խորհրդում: Անդամակցումից ըընդամենը երկու շաբաթ անց լույս տեսավ նրա առաջին հրապարակախոսական աշխատությունը, որն ավելի ուշ հայտնի դարձավ «Մանիֆեստ» խորագրի ներքո: Նույն թվականին տեղի ունեցան ևս մի քանի կարևոր իրադարձություններ: Նախ, Բ.Շոուն Միություն հրավիրեց իր մտերիմ ընկեր Ս.Վեբին, որի հետ, մինչ այդ, նա աշխատում էր Գաղութների հարցերով նախարարությունում: Ս.Վեբը, իր հերթին, անդամակցության առաջարկ ներկայացրեց իր գործընկեր Ս.Օլիվերին, իսկ մեկ տարի անց Միությանը միացավ Գ.Ուոլեսը: Ավելի ուշ այս անձինք կազմեցին ֆաբիանական մտքի «Մեծ քառյակը», թեև բոլոր չորսն էլ լայն հասարակության համար անհայտ անուններ էին 1885-1886թթ.:

1884թ. Միության կանոնադրության IV կետը հաստատեց, որ ի թիվս այլ նպատակների, անդամները կոչված էին ժամանակակից գրական հոդվածներ հավաքել, որոնք կարևոր մտավորական և սոցիալական հնչեղություն ունեն, տեղեկություններ կուտակել բոլոր հասարակական շարժումների և սոցիալական խնդիրների մասին: Միության քաղաքական կողմնորոշումը պարզաբանող կարևորագույն դրույթներից մեկը

արտացոլված էր մի փոքր ավելի ուշ ընդունված բանաձևում. «Միության անդամները հաստատում են, որ մրցակցության վրա հիմնված համակարգը ապահովում է փոքրամասնության երջանկությունն ու բարեկեցությունը մեծամասնության շահերի հաշվին: Հասարակությունը պետք է կերպարանափոխվի՝ իր բոլոր անդամների բարօրությունն ու երջանկությունը երաշխավորելու նպատակով»:

Այս համատեքստում, ի նկատի ունենալով վերոհիշյալ բանաձևի լեզվառճական առանձնահատկությունը, հարկ է ուշադրություն դարձնել Ֆաբիանականների վրա Ռ.Օուենի, Ջ.Բենթամի, Ու.Մորիսի և Ջ.Շելիի թողած գաղափարական ազդեցությունը. այս վաղ ժամանակաշրջանում նրանցից և ոչ մեկը չէր օգտագործում «սոցիալիզմ» եզրույթը: Մինչև Միության վեցերորդ գումարումը այս բառն առհասարակ չէր երևում կազմակերպության փաստաթղթերում, և առաջին անգամ ի հայտ եկավ Միության անդամներից մեկի դասախոսության ժամանակ («Երկու սոցիալիզմներ»)՝ համեմատական հեռանկարում տարանջատելու Ֆաբիանական միության սոցիալիստական պլատֆորմը՝ Սոցիալ դեմոկրատական դաշնության կողմից ընդունված գաղափարախոսությունից (ընդհանուր առմամբ, 1870-80-ական թթ. անգլիական հասարակական ասպարեզում սոցիալիստական կողմնորոշման 4 միություններ էին գերակայում. Սբ. Մեթյուի Գիլդիան (1877թ.), Ժողովրդավարական դաշնությունը (1881թ.), որը 1884թ. վերափոխվեց Սոցիալ դեմոկրատական դաշնության, իսկ նրա անդամ Ու.Մորիսը նույն թվականին լքեց ՍԴԴ շարքերը և հիմնեց Սոցիալիստական լիգա և 1883-84թթ. կազմավորված Ֆաբիանական միությունը):

1888թ. ընտրվեց Միության կառավարման խորհուրդը, որի մեջ մտան Ա.Բեսոն, Հ.Բլանդը, Ու.Կլարկը, Ս.Օլիվերը, Բ.Շոուն, Գ.Ուոլսը և Ս.Վեբը՝ թվով 7 ֆաբիանականներ, ում գրչին էին պատկանելու հռչակավոր Ֆաբիանական էսսեները. նրանք էին կոչված մշակելու ու ձևակերպելու ֆաբիանական սոցիալիզմի հիմնարար սկզբունքները:

Երկրորդ ենթաբաժնում քննարկվում է ֆաբիանականների առաջին սերնդի ներկայացուցիչների բարոյական և մտավորական պատկերը, վառ ֆաբիանական անհատականություններին բնորոշ ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները: «Անհատականացված մոտեցման» անհրաժեշտությունն այստեղ պայմանավորված է այն հանգամանքով, որ սկզբնական այդ շրջանում Ֆաբիանական միությունը հնարավոր չէր դիտարկել որպես կուսակցական տիպի մշտական ինստիտուցիոնալ կառուցվածք ունեցող կազմակերպություն: Ինչպես Մակկենզին է նկատում «Միությունն ... ի հայտ եկավ պատահականորեն», իսկ նրա անդամներն միառժամանակ իրենք էլ լավ չէին ըմբռնում և

պատկերացնում, թե ինչ միավորման են պատկանում: Քաղաքական կամ կազմակերպական ծրագիր որպես այդպիսին մշակված չէր. վաղ ֆաբիանականները՝ երիտասարդ, միջին խավին պատկանող մտավորականներ էին, որոնց միավորող գաղափարն էր՝ որոշ իմաստով վերացական, սակայն միաժամանակ նորմատիվային բնույթի մղումն ու ցանկությունը ինչ-որ լավ և բարի գործ կատարել, ներգրավվել հանրօգուտ մի գործողության մեջ, որն իրական նպաստ կբերեր հասարակությանը:

Աչքի ընկնող առաջին ֆաբիանականներից էր, օրինակ, Է.Պիսը, ով մանկուց լինելով համեստ անձնավորություն, այդուհանդերձ կարողացավ բացահայտել իր անհատականությունը՝ ընկնելով ֆաբիանականների ընկերական շրջապատի մեջ: Ուշագրավ է, որ Է.Պիսի ֆաբիանականների խմբին միանալու կարևոր շարժառիթներից մեկն էր նրա ներքին համոզմունքը, որ սոցիալական բարեփոխումների ցանկացած նախագիծ պետք է նախորդվի յուրաքանչյուր քաղաքացու արժեհամակարգի փոփոխմամբ: Ի տարբերություն անգլիական գրական և մտավորական թատերաբեմի այլ խմբերում տիրապետող թեզի, թե սոցիալական փոխակերպումները պետք է կրեն համապարփակ բնույթ և ուղղորդվեն մեծ ռազմավարական սխեմաներով, Է.Պիսին գրավում էր առաջին հերթին մարդու բարոյական վերածնունդը: Հենց այս գերակայությունների ամբողջությունից ծնունդ առավ Առաջադիմական ասոցիացիան (1882թ.), որի գլխավոր նպատակներից մեկն էր բարոյական զարթոնքին նպաստելը, ինչը, ըստ երիտասարդ Է.Պիսի՝ բոլոր տիպի քաղաքական և հասարակական բարեփոխումներին նախորդող պարտադիր նախադրյալը պետք է հանդիսանար:

Միության կնքահայրերից մեկը համարվող Ֆ.Պադմորը՝ հոգևորականի ընտանիքի ներկայացուցիչ էր: Կրթություն ստանալով Օքսֆորդում՝ նա մի որոշ ժամանակահատված տարվեց սպիրիտուալիստական հովերով, որոնք, ըստ նրա, կարող էին փոխարինել քրիստոնեական հավատքը: Երբ նա առաջին անգամ հանդիպեց Է.Պիսին, իսկ այնուհետև նաև Ս.Օլիվերին, Ֆ.Պադմորի նախկին համոզմունքները դարձյալ կասկածի տակ հայտնվեցին: Հատկանշական է, որ Ֆաբիանական միությանն անդամակցելու գրավչությունը պայմանավորված էր նոր միության ոչ այնքան կուռ հայեցակարգով. անդամների մի մասը պաշտպանում էին քաղաքական հստակ նպատակի անհրաժեշտությունը (Հ.Բլանդ, Ֆ.Պադմոր), իսկ մյուսները պնդում էին բարոյական և էթիկական նորմերի առաջնահերթության վրա (Պ.Չուբ, Թ.Դավիդսոն):

Նշանակալի ֆաբիանական Հ.Բլանդը «հին գվարդիայի» ներկայացուցիչ էր, ով դեռևս «Նոր Կյանք» ընկերակցության ժամանակներից քաղաքական նպատակներ և խնդիրներ մշակելու և առաջ

տանելու հիմնական ջատագովներից էր: Հ. Բլանդը և նրա կինը անդամակցում էին ՍԴԴ-ն, և, Է.Պիսի հետ միասին, համարվում էին հետևողական սոցիալիստներ: 1886թ. նա աջակցեց առանձին մարմնի՝ Ֆաբիանական պառլամենտական լիգայի ստեղծմանը, իսկ այնուհետև հրապարակեց «Գործնական սոցիալիստ» հոդվածը՝ կոչ անելով հիմնել սոցիալիստական կուսակցություն, որը կհամախմբեր կրթված աշխատավորներին և կնպաստեր «կառուցողական օրենսդրության արարմանը»:

1888թ. Հ. Բլանդն ընտրվեց Միության գործադիր ղեկավար՝ իր հիմնական կազմակերպական նպատակներից մեկը հռչակելով «միութենական միասնության ոգու կերտումը»: Ավելի ուշ՝ 1895թ. նա դարձավ նշանավոր Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի ղեկավար խորհրդի անդամ, իսկ 1908թ.՝ այլ ֆաբիանականների հետ միասին հիմնեց Հակապուրիտանական լիգան:

Ու. Կլարկը «հին գվարդիայի» մեկ այլ ներկայացուցիչն էր. լրագրող և արմատական հայացքների ջատագով՝ նա ավելի ուշ անցավ ունիտարիստների շարքերը, իսկ Միացյալ Նահանգներ այցելեցուց հետո՝ միացավ Էմերսոնյան տրանսցեդենտալիստների ճամբարին:

Մյուս վաղ ֆաբիանականների նման, Ու.Կլարկի մոտեցումները որոշ առումով երկիմաստ էին: Խորապես ուսումնասիրելով մարքսիզմի տեսությունը, ինչպես նաև բրիտանական սոցիալիստների աշխատությունները՝ նա հանգեց այն եզրակացության, որ «սոցիալիզմն ամբողջովին սխալ է»: Այդ իսկ պատճառով, 1886թ., Ու.Կլարկին առանց վարանելու ընդունեցին Միության շարքերը, իսկ 1888թ.՝ նաև կառավարման գործադիր խորհրդի անդամ:

Ճիշտ է, Ու.Կլարկն ավելի ուշ լքեց Միության մտերիմների կորիզը: Լինելով չափազանց հոռետես և դեպրեսիվ՝ նա առանձնակի մեծ հույսեր չէր փայփայում առ այն, թե բարոյական վերածննդի, վեհ գաղափարների և արժեքների առաջմղման ուղիով հնարավոր է փրկել աշխարհը:

Երրորդ գլուխը՝ **«Ֆաբիանական սոցիալիզմի հիմնարար սկզբունքները»** անդրադառնում է երկու կարևոր ասպեկտների՝ ֆաբիանական նոթեր-պրակների փիլիսոփայական և հրապարակախոսական վերլուծությանը, ապա՝ ֆաբիանական էսսեների ներկայացմանը՝ իբրև մտավորական, ինչպես նաև հասարակական-քաղաքական մոտեցումների մի ամբողջության:

Ըստ Հ.Լասկիի, ֆաբիանական սոցիալիզմը ծնունդ առավ երեք հիմնական գործոնների ազդեցության ներքո: Նախ, դա ուշ վիկտորիանական կապիտալիզմի սոցիալական հետևանքների հանդեպ հանրության տածած ընդհանուր հակակրանքն էր, որը, մասնավորապես, առաջադեմ մտավորականության շրջանում, էթիկական համատարած

անհանդուրժողականության բնույթ ընդունեց: Երկրորդը, դարավերջին առավել քան ակնհայտ դարձավ, որ քաղտնտեսության դասական դոկտրինաները չհաջողեցին «արդարացնելու» փաստացիորեն կայացած այն համակարգը, որի լեգիտիմությունը դրանք կոչված էին սատարելու, ինչպես նաև ապահովելու դեպի ապագան միտված զարգացման տեսական և գործնական հիմքերը: Երրորդը, մրցակցային ինդուստրիալիզմը չկարողացավ կանխել շահերի բախումն ու հակամարտ միտումների ուժգնացումը հասարակության ներսում, որ ենթադրաբար պետք է լիներ համախմբված և միասնական:

Հասարակական և քաղաքական այս նոր համատեքստում, որն անկասկած փոփոխությունների լայն ասպարեզ էր բացում, ֆաբիանականները ամենևին էլ մտադիր չէին վերաձևելու զանգվածային շարժման կամ կազմակերպված քաղաքական կուսակցության, և ոչ էլ հակված էին սեփական թեկնածու առաջադրելու պետության քաղաքական վերնախավին: Իրական նպատակը համեստ էր. ֆաբիանական էսսեների և դասախոսությունների միջոցով անգլիական ընթերցող և կարծիք ձևավորող հանրությանը հաղորդակից դարձնել էթիկական և բարոյական բարձր արժեքներին, որոնք պետք է տանեն դեպի նոր հասարակական կարգի ստեղծման: Ինչպես ավելի ուշ Է.Պիսն էր նկատում՝ Միության գլխավոր նպատակն էր համոզելու անգլիացի ժողովրդին իր քաղաքական համակարգն ու սահմանադրությունն իրապես ժողովրդավարական դարձնել և այնպես սոցիալիզացնել խոշոր արտադրությունները, որպեսզի ժողովրդի կյանքն ամբողջությամբ անկախանա մասնավոր կապիտալիզմի քմահաճույքներից: Այս իմաստով ֆաբիանականների սկզբունքային քաղաքական կրեդոն էր նշանավոր ներթափանցման հայեցակարգը:

Ժխտելով դասակարգային պայքարի մասին թեզը և այդպիսով մերժելով նաև սոցիալական հեղափոխության գաղափարը՝ ֆաբիանականները որևէ ցանկություն չունեին ինչ-ինչ դասակարգի ներկայացուցիչների կամ խոսնակի դերակատարություն ստանձնելու. նրանց հասցեատերերն էին բոլոր այն քաղաքացիները, որոնք ըմբռնում էին առկա սոցիալական չարիքները և ձգտում էին փոփոխության:

Քաղաքական իմաստով՝ ֆաբիանական կարևոր նախադրյալներից էր հասարակության բաղդադման և «խմբակային» տրոհման անթույլատրելիությունը, ինչն ամենևին չէին բացառում արմատական ուղեգծի կողմնակիցները. անհրաժեշտ էր համարվում հասարակության այնպիսի սոցիալական վերակազմակերպում, որը թեև կշարունակեր մնալ մրցակցային իր բնույթով, բայց կապահովեր նաև հանրության մեծամասնության բարեկեցությունը:

Դրա հետ մեկտեղ, ֆաբիանականները շատ շուտ հասկացան, որ տարաբնույթ սոցիալիստական խմբավորումների և

գաղափարախոսությունների ֆոնին հարկավոր է ի մի բերել սեփական քաղաքական հայեցակետերը, որոնք առարկայացան նախ Ֆաբիանական նոթերի, ապա՝ «Ֆաբիանական հիմնադրույթների» և ֆաբիանական էսսեների ձևով: Ֆաբիանական առաջին նոթը՝ «Ինչու՞ են աղքատներն այսքան շատ» լույս տեսավ 1884թ., և այնպիսի ժողովրդականություն վայելեց, որ տասնամյակներ շարունակ պարբերաբար վերահրատարակվում էր[13]:

Ֆաբիանական երկրորդ նոթը կոչվում էր «Մանիֆեստ»[14]: Թեև այն անանուն էր, սակայն բոլորի համար էլ պարզ էր դրա պատկանելությունը Բ.Շոուի գրչին: Չնայած իր կատեգորիկ անվանմանը, տեքստն իրականում զուրկ էր որևէ կոնկրետ սահմանումներից, թե ինչպես են ֆաբիանականները պատկերացնում սոցիալիզմ եզրույթը իրականության մեջ՝ տեսական ելևէջներից զատ: Ճիշտ է, այստեղ Բ.Շոուն թվարկում է նաև ֆաբիանականների հիմնական «տեսական» նպատակները. հողի ազգայնացում, պետության և խոշոր կապիտալի մրցակցության անհրաժեշտություն, ուղղակի հարկերի սահմանում, կանանց քաղաքական իրավահավասարություն, ազատական կրթություն:

Ֆաբիանական նոթերից թերևս ամենագործուն ազդեցությունը թողեց N 5-ը՝ «Փաստեր սոցիալիստների համար» աշխատությունը, որը հրապարակվեց 1887թ.: Գործնականում Ս.Վեբի կողմից հեղինակած այս համառոտ ակնարկում հիմնավորվում էր այն կարևոր թեզը, ըստ որի կապիտալիստական կացութաձևից սոցիալիզմի անցման ցանկացած ծրագրի հենքում պետք է ընկած լինեն առաջին հերթին տնտեսագիտական մոտեցումներ և փաստարկներ: Գիտական կողմնորոշումն առհասարակ դիտարկվում էր իբրև սոցիալական փոխակերպման հիմնական գաղափարական արդարացումներից մեկը: Ավելին, ֆաբիանականները վստահություն էին հայտնում, թե ցանկացած մարդ, ով մտավոր որոշակի կարողությունների է տիրապետում, ծանոթանալով առկա փաստերին, չի վարանի դառնալ սոցիալիստ: Ու թեև այս գաղափարներն իրականում աչքի չէին ընկնում իրենց յուրատիպությամբ, և անհամեմատ ավելի լրջորեն ներկայացվում էին Կ. Մարքսի «Կապիտալում»՝ ֆաբիանական նոթերը չափազանց կարևոր առավելություն ունեին. դրանք էժան էին տպագրման ու տարածման առումով և անհամեմատ ավելի մատչելի էին լայն զանգվածների համար:

1886թ. ֆաբիանականները մեծիմասամբ հրաժարվեցին մարքսիստական գաղափարախոսությունից՝ հակվելով հօգուտ անգլիական տնտեսական մտքի ներկայացուցիչներ Դ.Միլի և

[13] W.L. Phillips, Why are the Many Poor, Fabian Tracts No.2., p. 2.
[14] Fabian Essays, ed: G. B. Shaw, London, Allen and Unwin, 1931, p. 35.

Դ.Ռիկարդոյի մոտեցումներին: Այս քայլն իր հերթին հանգեցրեց Սոցիալ-դեմոկրատական դաշնության հետ տարաձայնությունների զգալի սրմանը՝ ինչպես հայեցակարգային, այնպես էլ մարտավարական հիմնահարցերի շուրջ: 1887թ. ֆաբիանական դոկտրինում շեշտադրվում էր հեղափոխական եղանակներով պայքարից հրաժարվելու հիմնադրույթը:

Ֆաբիանականները ամենևին էլ հակված չէին և չէին էլ ցանկանում մարմնավորել ժողովրդական հեղափոխական կուսակցության կամ ժողովրդական առաջնորդի կերպարը. ակնհայտ էր ինչպես կարողությունների, այնպես էլ խառնվածքի բացակայությունը: Նրանք շատ լավ ըմբռնում էին, որ բրիտանական հասարակական-քաղաքական համատեքստում նոր աշխատավոր դասակարգի շահերը արտահայտող քաղաքական ուժը պետք է ձերբազատված լինի հեղափոխական բռնության գերակայությունից և մարքսիստական սկզբունքների կրկնօրինակելուց:

Միության հաջողության՝ առաջին հերթին անգլիական իրականության մեջ, երկրորդ գլխավոր գրավականը պայմանավորված էր երիտասարդ գործիչներին հասարակական և քաղաքական դաշտ բերելու հաջողված մարտավարությամբ, մինչդեռ նրանց համբավը շատ շուտով սփռվեց աշխարհով մեկ: Ինչպես նշվեց մինչ այս, մի քանի տարի շարունակ Միությունը ղեկավարում էին յոթ հուշագիրներ, բայց նրանցից չորսը առավել ազդեցիկ դերակատարություն ունեցան Միության մտավորական առաջխաղացման գործում՝ Ս.Վեբը, Բ.Շոուն, Գ.Ուելսը և Ս.Օլիվերը: Նրանցից յուրաքանչյուրը հեղինակել էր «Սոցիալիզմի հիմունքների» համապատասխան չորս էսսեները (համապատասխանաբար չորս ենթագլուխներով՝ Պատմություն, Տնտեսություն, Արդյունաբերություն և Բարոյականություն):

Ֆաբիանական քաղաքական մտածողության և հասարակական փիլիսոփայության հիմնական հատկանիշներից էր, ինչի ցայտուն օրինակն է Ֆաբիանական էսսեների շարքը՝ մոտեցումների էկլեկտիկ բնույթը: Դժվար է դուրս բերել մի որևէ գաղափարական առաջնորդի, որի դիրքորոշումները տիրապետող կլինեին ֆաբիանական մտավորականության շրջանում: Այդուհանդերձ, նրանց բոլորին միավորում էր բարձրարժեք մտավորական և գրական կատարելատիպերի «ռեալ» կյանք ներթափանցման անթաքույց նկրտումը:

Չորրորդ գլուխում՝ **«Առաջադեմ քաղաքական և գրական կատարելատիպերի փոխկապվածությունը»**, որն ընդգրկում է երեք ենթաբաժիններ, վերլուծվում են ֆաբիանական առավել ազդեցիկ մտավորականների՝ Ու.Մորրիսի, Բ.Շոուի և Ու.Ուելսի գրական և քաղաքական-հրապարակախոսական ժառանգության տարբեր կողմերը: Վաղ բրիտանական սոցիալիստական շարժման, այդ թվում նաև

Ֆաբիանական միության կազմում, մտավորական և գրական կյանքի նշանավոր անհատները անժխտելի մեծ դեր խաղացին ինչպես սոցիալիստական գաղափարախոսության, այնպես էլ նրա քաղաքական ամրապնդման գործում: Իրենց ժամանակների երևելի սոցիալիստ մտածողների շարքում առանձնանում էին երեք անձնավորություններ, որոնցից յուրաքանչյուրը բնորոշում և արտացոլում էր սոցիալիստական մտածողության կայացման ու ձևավորման առանձին փուլերը:

Ու.Մորիսի հայեցակարգային մոտեցումները տիրապետող էին սկզբնական շրջանում: Ինքնակենսագրական համառոտ աշխատության էջերում նա ներկայացնում էր սոցիալիզմի ըմբռնման իր սեփական մեկնությունը, որի հիմքում ընկած էր սոցիալիզմի իբրև համատեքստային իրողության մասին թեզը. «սոցիալիզմը դա վիճակ է, երբ բացակայում են հարուստներ և աղքատներ..., ինչը, սակայն, պետք է տանի համակեցության տեսիլքի իրագործումը իրականության մեջ»: Հատկանշական է, որ Ու.Մորիսի պատկերացումների հենքում ընկած «գործնական սոցիալիզմի» գաղափարը «ածանցյալ էր», այդուհանդերձ, գաղափարական կատարելատիպից: 1883թ. նա ընդգրկվեց Սոցիալիստական դեմոկրատական դաշնության մեջ՝ դառնալով սոցիալիստական այդ նոր միավորման եռանդուն անդամներից մեկը:

Բազմաթիվ մեկնաբանների կարծիքով՝ Ռասկինի և Շոուի կողմից սատարվող սոցիալիզմի տեսակն իրենից ներկայացնում էր «սոցիալիզմի ազնվական ընթերցման» ձևերից մեկը՝ ավելի շատ միտված էր ոչ այնքան գիտական ըմբռնման հրամայականի ընդունմանը, որքան էթիկականի առաջմղմանը. «նրանց հավատը մարդկության ապագայի հանդեպ համամարդկային չէր. նրանց մոտեցումների հենքում ընկած էր դեմոկրատի և ազնվականի միաձուլման մասին թեզը...»: Բ.Շոուի աշխատություններում ակնհայտորեն երևում էր մտավորականի առջև ծառացած երկընտրանքը էսթեթիկականի և կիրառականի միջև: Վաղ շրջանի մենագրություններից մեկում Շոուն, նկարագրելով 1880-ական թթ. ինտելեկտուալ մթնոլորտը, դժգոհությամբ նկատում և արտահայտում էր հիասթափությունը քաղաքականությունից, տարածված այն մտայնությունից, որ եզրահանգում էր «արվեստը՝ արվեստի համար» կաղապարին, այն կարծր հայացքից, թե գիտությունն ու կրոնը տարանջատված են արմատական բաժանարար գծերով, իսկ դարվինիզմը՝ հակադրվում ավանդական հավատին: Արվեստը միավորվում էր մեծամասնության հետ, արվեստագետը ընկերանում ամբոխի հետ: Քանդակագործները, նկարիչները և գրողները անգլիական պատմության մեջ առաջին անգամ դիմեցին հեռացան ազնվականության դասից՝ համալրելով պրոլետարիատի շարքերը:

Բ.Շոուն հրաշալի գիտակցում էր իր սերնդի յուրատիպությունը, ինչը, հավանաբար, հիմնական պատճառներից մեկն էր, որ դրդում էր նրան մոտենալ անգլիական իրականությանը բացատրական տարբեր տեսանկյուններից: Նա մեկ տուրք էր տալիս Ա.Բերգսոնին, մեկ ուրիշ անգամ՝ Չ.Դարվինին և Ու.Բատլերին, մեկ այլ պարագայում վերադառնում Ֆ.Նիցշեի ելակետային համադրույթին: Հենց այդ «պրպտումների» արդյունքում ծնվեց և ձևավորվեց տիպիկ շոուական անհատական սոցիալիզմի հայեցակետը, որքան էլ այս եզրույթը անբնական չհնչի՝ մարմնավորում ստանալով նրա գերհերոսների կերպարների և Կյանքի ուժի մասին գաղափարների մեջ:

Ու.Ուելսի լայն ժողովրդականության միգուցե միակ պատճառը կայանում էր նրանում, որ նա առաջինն էր, ով բարձրաձայնեց համայն մարդկության առջև ծառացած հիմնախնդիրների գիտական «լուծումներ» գտնելու հակվածության սնանկության մասին: Վ.Ուելսի գիտական ակնարկներում առաջ էր քաշվում այն թեզը, ըստ որի հանրությունն առայժմ պատրաստ չէր գիտական այդ «արգասիքները» գործնականորեն ընդունելու. «արգասիքներ», որոնք գիտական-բանական դպրոցների համադրության մեջ ընկալվում և ներկայացվում էին իբրև երաշխավորված իրողություն:

1905 թ. նա ֆաբիանական միությանը ներկայացրեց երկու դասախոսություններ, որոնցից առաջինը երգիծական ոճի մեջ մերկացնում էր բրիտանական իրականությունն ու դրա առանձնահատկությունները, մինչդեռ երկրորդը՝ նշանավոր դարձավ «Ֆաբիանականների սխալները» անվան ներքո: Ուշագրավ էր, որ ըստ Ուելսի ֆաբիանականների հիմնական սխալներից էր Միության փոքր լինելու հանգամանքը, իսկ երկրորդը, ինչը «ապշեցրել էր» հեղինակին՝ Միության «անտեղի աղքատ» լինելու հանգամանքը, ինչը ենթադրում էր ոչ այլ ինչ, քան հասարակության տնտեսական բազայի փոփոխություն:

Հինգերորդ գլուխը՝ **«Ֆաբիանական սոցիալիզմից դեպի Լեյբորիստական կուսակցության ստեղծումը»** կազմված է երկու ենթագլուխներից. «Արհմիութենական շարժումը և Անկախ լեյբորիստական կուսակցությունը» և «Լեյբորիստական կուսակցության ստեղծումն ու զարգացումը»:

Ուշ վիկտորիանական ժամանակաշրջանում բրիտանական սոցիալիստական շարժման զարգացման ուղին, ինչպես նաև Անկախ լեյբորիստական կուսակցության ստեղծումը հստակորեն փաստեցին թե որքան հզոր մտավորական և քաղաքական ազդեցություն ուներ Ֆաբիանական միությունը: Քաղաքական այդ զորեղությունը իր դրսևորումը գտավ նաև տեղական կառավարման մակարդակներում. եթե 1892թ. տեղական ֆաբիանական միությունների թիվը կազմում էր 36, ապա

1893թ. այն հասավ 74, ներառյալ Բոմբեյի և Հարավային Ավստրալիայի մասնաճյուղերը:

Ավելին, Միության պարագլուխները հստակորեն ըմբռնեցին, որ Լոնդոնյան միության կողմից որդեգրված քաղաքական պայքարի ոչ ավանդական մեթոդները անհամատեղելի են ծայրամասերի աշխատավորության շահերը ներկայացնելու ու պաշտպանելու տեսանկյունից, ուստիև ԱԼԿ-ի (Ազատ լեյբորիստական կուսակցություն) ստեղծումը, հասկանալի պատճառներով, արժանացավ ֆաբիականների հավանությանը: Երկու մարմինները՝ Ֆաբիանական միությունը և Անկախ լեյբորիստական կուսակցությունը «բրիտանական տեսակի սոցիալիզմի» տիպական ներկայացուցիչներն էին, և երկուսն էլ էական ազդեցության էին վայելում սոցիալիստական գաղափարախոսության վերաբերյալ հանրային կարծիքի ձևավորման տեսանկյունից: Ավելին, ակնհայտ էր երկու կառույցների միմյանց հանդեպ նշանակալի փոխազդեցության հանգամանքը:

Եթե Լեյբորիստական կուսակցությունը կոչված էր արտահայտելու ժամանակների նոր ոգին և շունչը, ապա Ֆաբիանական միությունը միտված էր ստանձնելու շարժման ուղեղային կենտրոնի գործառույթները, արտացոլելու և կյանքի կոչելու մտավորական հենքի վրա կառուցված առաջընթացի իր ըմբռնումը: Ընդ որում, ֆաբիանականները հստակ սոցիալական փիլիսոփայության կրողներն էին, թեև խիստ հեռավորություն էին պահպանում մարքսիստական մոտեցումներից: Նրանք սոցիալիստ էին դարձել ոչ այնքան ոգեշնչման ուժի ներքո, որքան մտավորական-բանական համոզմունքների կերտման բերումով:

Գործնական քաղաքականության ասպարեզում այս երկու միավորումները ներդաշնակորեն օժանդակում էին միմյանց. եթե չլիներ ԱԼԿ-ն, ապա ֆաբիականները, հավանաբար, կվերածվեին մտավորական տեսաբանների մի խմբի, որն իրականում ամբողջությամբ կտրված կլիներ աշխատանքային շարժման ելևէջներից: Այս առումով ԱԼԿ օգնեց ֆաբիանական միությանը փոխակերպել «տեսաբանության» բնագավառի իր ձեռքբերումները գործնական և կառուցողական քաղաքական ծրագիր ստեղծելու գործում:

Լոնդոնի շրջանային խորհրդի 1892թ. Ֆաբիանական միության 6 անդամներ ընտրվեցին պատգամավորներ: Նրանց թվում նաև Սիդնեյ Վեբը, որն ազատվել էր Գաղութների նախարարությունում իր պաշտոնից, որպեսզի լիովին նվիրեր իրեն քաղաքական և գրական գործունեությանը (Ս.Վեբը ներգրավվեց նաև կրթական մի քանի հիմնարկությունների կառավարման խորհուրդների մեջ, ավելին, Սիդնեյ և Բեատրիս Վեբերը 1895թ. նշանավոր Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի հիմնադրման գլխավոր նախաձեռնողներն էին): 1892թ. ի վեր Լոնդոնի շրջանային

խորհրդում մշտապես առկա էր ֆաբիանական պատգամավորների մի խումբ, որն ակտիվորեն համագործակցում էր ինչպես «լեյբորիստական խմբի», այնպես էլ արհմիութենականների հետ: Այդուհանդերձ, պետք է ի նկատի ունենալ, որ ֆաբինականների հետաքրքրվածությունը տեղական ինքնակառավարման մարմինների կատարելագործմամբ ամենևին էլ չէր նշանակում հետնահանջ պառլամենտական քաղաքականությունից: Ընդհակառակը՝ տեղական և համազգային հարթություններում վարվող քաղաքական ուղեգիծը դիտարկվում էին իբրև միմյանց փոխլրացնող: Տեղական ինքնակառավարման մակարդակում ֆաբիանականների ակտիվ գործունեության անկյունաքարն էր պետության սոցիալ-տնտեսական ոլորտում դերակատարության ուժեղացումը, սակայն պետական ամենատիրության բացասական դրսևորումներից խուսափելու նպատակով ֆաբիանականները ձգտում էին հիմնական շեշտը դնել տեղական մարմինների լիազորությունների ընդլայնման վրա:

Այս պատմական հակապատկերում զարմանալի չէ, որ Առաջին աշխարհամարտի տարիներին և 1920-ական թթ. Լեյբորիստական կուսակցությունը փաստացիորեն ղեկավարում էին ֆաբիանականներ Ա. Հենդերսոնը և Ս.Վեբը: Եվ հենց Ա.Հենդերսոնի ազդեցության ներքո տեղի ունեցավ նաև ֆաբիանական «Հիմնադրույթների» վերանայումը և Ֆաբիանական միության Լեյբորիստական կուսակցության անբաժանելի մաս դարձնելու երկարամյա գործընթացը: 1918թ. Լեյբորիստական կուսակցության կանոնադրությունը, ինչպես նաև դրան հաջորդած առաջին կուսակցական ծրագրերը կազված էին ֆաբիանական սկզբունքների հիման վրա: Ֆաբիանականներ էին նաև լեյբորիստական առաջին և երկրորդ կառավարությունների նախարարների և բարձրաստիճան բյուրոկրատների զգալի մի մասը: Առաջին լեյբորիստական կառավարությունների քաղաքականությանը բնորոշ էր զուտ ֆաբիանական առաջնահերթությունների գերակայությունը՝ չափավոր պրագմատիզմն ու սոցիալ-բարեփոխական սկզբունքների գործնականացումը:

20-րդ դարի առաջին եռամյակում լեյբորիզմի վրա թողած ֆաբիանականների ազդեցության կարևորագույն արդյունքն էր կուսակցության կողմից ֆաբիանականության իբրև պաշտոնական գաղափարախոսության և սոցիալիզմի՝ իբրև ծրագրային հիմնական նպատակի ընդունումը:

Ավելի լայն քաղաքական համատեքստում՝ կարելի է փաստել, որ 1890-ական թթ. սկզբներին ֆաբիանական սոցիալիզմը վերաճեց անգլիական սոցիալիստական շարժման գերակայող ուժի՝ լայն տարածում գտնելով նաև անգլախոս բազմաթիվ երկրներում: Դա որոշ իմաստով նպաստեց անգլիական Սոցիալիստական ֆեդերացիայի

ժողովրդականության անկմանը բուն Անգլիայում՝ հետին պլան մղելով նաև անարխիստական շարժման արդիականությունը: «Պետական» ռեֆորմիստական սոցիալիզմը, որն ընկած էր ֆաբիանականության հենքում դարձավ եվրոպական մայրցամաքային սոցիալիզմի առաջին աղապտացված տարբերակը անգլիական հողում:

Եզրակացության մեջ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները, ատենախոսը եզրակացնում է.

- Ֆաբիանական միության ձևավորումը և գործունեությունը նշանակալի ներազդեցություն ունեցավ ինչպես անգլիական հասարակական-քաղաքական ասպարեզի, այնպես էլ բրիտանական ինտելեկտուալ իրադրության վրա: Ֆաբիանականների կողմից մշակված և կիրառված հասարակական գործողության եղանակը՝ «ներթափանցման» գործելաոճը իր ուրույն «մտավորական» դրոշմը թողեց Մեծ Բրիտանիայի քաղաքական մշակույթի վրա: Միության ապակենտրոնացված կազմակերպական տրամաբանությունը անուղղակիորեն կոչված էր արտացոլելու Ֆաբիանականության կողմից որևէ դասակարգի կամ հասարակական խմբի քաղաքական շահերի ներկայացման մերժումը, սակայն, միաժամանակ՝ նոր ասպարեզ բացեց ձախ սոցիալիստական գաղափարների շուրջ համախմբված մտավորականության համար ակտիվ հասարակական և քաղաքական ներգրավման համար:
- Ֆաբիանական միությունը էական գաղափարախոսական և հայեցակարգային ներազդեցություն ունեցավ Լեյբորիստական կուսակցության քաղաքական պլատֆորմի մշակման և ձևավորման վրա: Ֆաբիանականների ներգրավվածությունը անգլիական տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման գործընթացում ակնհայտորեն նպաստեց լայն զանգվածների տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը, բրիտանական միջին խավի քաղաքական մասնակցության աճին, ինչպես նաև անգլիական տիպի սոցիալիստական գաղափարախոսության ամրապնդմանը:
- Ֆաբիանական սոցիալիզմի քարոզչությունը զգալիորեն նպաստեց մարքսիզմի և արմատական գաղափարախոսությունների գրավչության անկմանը բրիտանական հասարակության շրջանում: Ավելին, արդեն 20-րդ դարասկզբին ֆաբիանական գաղափարները ընդօրինակում է Անկախ աշխատավորական կուսակցությունը՝ անհրաժեշտ հիմքեր ստեղծելով չափավոր սոցիալիստական գաղափարական համատեքստի ստեղծման համար:
- 1920-ական թթ. ֆաբիանականությունը ծառայեց իբրև լեյբորիզմի՝ ժամանակակից բրիտանական քաղաքական մշակույթի երկրորդ կարևորագույն հենասյան կայացման գաղափարական հենքը:

- Ֆաբիանական ականավոր մտավորականների քաղաքական-հրապարակախոսական գործունեությունը էապես նպաստեց նոր քաղաքական մշակույթի, քաղաքական երկխոսության նոր «ձևաչափերի» արմատավորմանը բրիտանական իրականության մեջ: Ֆաբիանական միության կողմից կազմակերպված հանրային դասախոսությունների շարքը, նշանավոր ֆաբիանական էսսեների հրապարակումն ու տարածումը սոցիալական երկխոսության որակապես նոր մթնոլորտ ապահովեցին, որտեղ առաջնային դեր ստանձնեցին անգլիական մտավորականության երևելի դեմքերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

1. **Abdul Hamid Salloum, Contradictory Characteristics of the Social Scene in England and the Rise of Socialist Political Concepts in late 19th Century, Bulletin of Yerevan University (Բանբեր Երևանի համալսարանի), Social Sciences: International Relations, Political Science, Yerevan, 2010, 132.6, pp. 65-73.**
2. **Abdul Hamid Salloum, Trade unionism and the Independent Labour Party, Kantegh (Կանթեղ), N4 (45), Yerevan, 2010, pp. 143-148.**
3. **Abdul Hamid Salloum, From the Fellowship of the New Life to the Fabian Society, Kantegh (Կանթեղ), N4 (45), Yerevan, 2010, pp.149-153.**

Саллум Абдул Гамид Фаджр

«Фабианское движение и интеллекуальная среда в Великобритании (вторая половина 19-го в. – первые три десятилетия 20-го века)»
Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - “Всемирная история”.
Защита состоится 6-го июля 2011г., в 15.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4г.

Р Е З Ю М Е

Диссертационная работа посвящена исследованию становления и развития фабианского движения в контексте формирующейся новой интеллектуальной среды в Великобритании во второй половине 19-го века – первых трех десятилетий 20-го века.

Всестороннее изучение вопросов, касающихся данного периода истории Великобритании, имеет важное научное значение для выявления, глубокого понимания и объективной оценки социальных процессов, проистекающих в английском обществе, отражения влияния интеллектуальной среды на формирование и «внедрение» социалистический концептов, с типично английской спецификой, в политическую культуру и общественно-политическое сознание в период заката викторианской эпохи. Исследуемая тема актуальна также с точки зрения более широкого понимания и осмысления фабианского идейно-политического наследства, нашедшего свое выражение в политических практиках бывших британских доминионов и колоний.

Целью диссертационной работы является:

1) выявление и представление общих параметров социальных противоречий в поздневикторианскую эпоху, общественно-политические предпосылки переосмысления традиционных устоев общественного порядка в Великобритании второй половины 19-го века;

2) изучение и анализ исторический и политической специфики формирования Фабианского общества;

3) исследование и выявление роли выдающихся фабианских деятелей на процесс становления британского социалистического движения и методы политической борьбы, а также формы политической вовлеченности Фабианского общества, получившие свое отражение в знаменитой стратегии «проникновения»;

4) Изучение и представление публицистической деятельности Фабианского общества;

5) Выявление и анализ влияния прогрессивных социальных идеалов и новых социалистических идей на политическую культуру Великобритании;

6) Осмысление и историческая оценка роли выдающихся фабианцев на процесс формирования политической платформы Лейбористской партии.

Методологической основой диссертационной работы является сравнительно-сопоставительное исследование фактов и анализ разнообразных вопросов, точек зрения и источников, касающихся предпосылок и процесса формирования Фабианского движения в Великобритании второй половины 19-го века – первых трех десятилетий 20-го века.

Диссертационная работа имеет традиционную структуру и включает в себя введение, основную часть, состоящую из пяти глав, которые в свою очередь на параграфы, заключение, список использованных источников и литературы.

Первая глава работы «Основы фабианского социализма» обращается к двум тематикам контекстного характера – социально-политическим противоречиям поздневикторианской эпохи и предшественникам фабианского социализма. В фокусе внимания, в частности, находятся проблемы, связанные с противоречивыми аспектами социальной среды, в условиях которой формировались первые ростки социалистического мышления, впоследствии принявших более конкретные очертания в виде фабианского социализма. Отдельно освещаются вопросы международно-политического порядка и международного положения Великобритании последней четверти 19-го века, а также оказавшие немаловажное влияние внутриполитические процессы и идеологические тренды в самой Англии. В более предметном ключе рассматриваются основные причины, пошатнувшие уже ставшую традиционной викторианскую внутрисоциальную стабильность английского общества. Анализируется роль английской интеллигенции, в частности, в осмыслении и пропаганде новых идейно-политических веяний.

Во второй главе диссертационной работы, «Рождение фабианского общества», рассматриваются две взаимосвязанные тематики, имеющие непосредственное отношение к формированию самого фабианского общества. В частности, здесь в едином ключе представляются идейно-политические метаморфозы, проистекающие в среде английской

интеллигенции, которые, в конечном итоге привели к созданию общества «Новая жизнь» (1883г.) - предтече Фабианского общества. Характерная особенность данного периода - формирование консолидированного подхода значительного числа будущих фабианских деятелей относительно «базовых» методов достижения общественных идеалов. Если на начальном этапе молодые представители фабианского течения были скорее склонны к этическому и своего рода интеллектуально-протестному осмыслению политической борьбы, то уже ко второй половине 1890-ых гг. вызревает понимание необходимости законодательного оформления важнейших «социалистических идеалов». Именно этот фактор в значительной степени сопутствовал созданию «Новой жизни». Вместе с тем, несмотря на кажущуюся на первый взгляд разноплановость идейных постулатов членов новой организации, практически весь костяк будущих фабианцев принимал тезисы Р.Оуэна об императивности самосовершенствования.

Несколько месяцев спустя было принято решение об основании Фабианского общества. Новое объединение имело практически полностью «интеллигентский формат»: единственным представителем рабочего класса в новой организации был маляр У.Филипс. Очень скоро ряды фабианцев стали пополнять госслужащие, журналисты, писатели, университетские лектора, а также предприниматели средней руки. В сентябре 1883г. Б.Шоу был принят в ряды Фабианского общества, а в 1885г. – стал членом правления. Вскоре Б.Шоу пригласил в члены общества своего давнего знакомого С.Веба, а последний, в свою очередь - С.Оливера и Д.Уоллеса, которые и сформировали немногим позже «великую четверку» фабианского общества.

IV пункт устава организации от 1884г. в числе прочих целей призывал членов организации собирать сведения о насущных социальных и политических проблемах, «каталогизировать» наиболее актуальные публикации о текущих проблемах социального и экономического характера. Чуть позже была принята резолюция, которая по существу конкретизировала политическую направленность общества фабианцев, исходным тезисом которого стал призыв к реформированию общества с целью обеспечения благоденствия всех его членов и фактическое признание колоссальных социально-экономических диспропорций, «рожденных системой, основанной на конкуренции». Примечательно, однако, что сам термин «социализм» фабианцами не использовался, а само слово и вовсе отсутствовало в официальных документах Общества (впервые его использовал один из фабианцев в свой лекции «Два социализма», чтоб в сравнительной перспективе показать существующие различия в толковании

социализма в платформах Социал-демократической федерации и Фабианского общества).

Вторая часть данной главы посвящена описанию моральных, ценностно-этических и человеческих качеств фабианцев первой генерации на индивидуальном примере наиболее ярких представителей Общества (Э.Пиз, Ф.Падмор, Г.Бланд,У.Кларк), выявлению, в некотором смысле, «собирательного образа» первых фабианцев. На фоне достаточно противоречивого социально-культурного контекста поздевикторианской эпохи, наложившей несомненный отпечаток на ценностные ориентиры фабианских деятелей и их жизненные пути, показаны разнящиеся обстоятельства и субъективные факторы, которые предопределили формирование их политических взглядов, трансформации концептуального и мировоззренческого плана.

В третьей главе, «Основные принципы фабианского социализма», анализируются содержательные аспекты фабианских публикаций – трактатов, статей, лекционных текстов и эссе. В соответствующих параграфах освещаются как идейно-концептуальные, так и публицистические измерения подходов фабианцев в отношении распространения и практического воплощения социалистических концептов в английском обществе. Акцентированное внимание к фабианским очеркам обусловлено несколькими обстоятельствами. Во-первых, Фабианское общество изначально отказалось от идеи политического представительства определенного класса либо сегмента английского общества в среде руководящей элиты государства. Иными словами, фабианцы не претендовали на создание отдельной политической партии или выдвижение собственного кандидата на политическую государственную должность, с соответствующими исполнительными функциями. Реалистические, по мнению фабианцев, цели носили куда более скромный характер. Предполагалось посредством фабианских эссе и лекционных курсов способствовать распространению в широких слоях английского общества этических и нравственных ценностей, которые должны были в конечном итоге привести к формированию качественно нового социального порядка. В практической плоскости, общественно-политические устремления фабианцев сводились к императивности известной политики «проникновения» на уровне интеллектуального и нравственного сознания обычных граждан. Сила убеждения считалась важнейшим фактором продвижения политических целей Общества.

Во-вторых, в 1886г. фабианцы окончательно отказались от марксистских тезисов, так же как и от революционных методов борьбы, изначально не внушавших какого-либо доверия в среде фабианских

социалистов. Важнейший политический постулат гласил о непозволительности социальной фрагментации, что могло бы привести к еще большей поляризации. Более того, классовая борьба не рассматривалась в качестве альтернативы достижению социалистических идеалов, а члены Общества никоим образом не идентифицировали себя с интересами «широких народных масс». В отличие от радикально ориентированных политических сил, фабианцы выступали за сохранение системы, основанной на конкуренции, однако с условием обеспечения благосостояния большинства.

Вместе с тем, другой важной задачей фабианцев стала кристаллизация собственных концептуальных и философских позиций на фоне других социалистических течений и движений, выдвигающих схожие цели. В этом смысле, публикация и распространение трактатов и эссе явилась основной формой «опредмечивания» собственно фабианской платформы политического действия. В ряду таких публикаций известность приобрел, к примеру, «Манифест» Б.Шоу, хотя в содержательном и политическом отношениях более значимым событием стало выход в печать трактата N 5, «Факты о социализме» (С. Веб), где среди прочего подчеркивалось непреложность экономического и научного мышления в деле построения нового социального порядка. Интересен, однако, тот факт, что в идейном отношении эссеистов «большой четверки» (Б.Шоу, С. Веб, Г. Уэллс, С. Оливер), перу которых принадлежали «Основы социализма», объединяла скорее сама эклектичность их мировоззренческих подходов, чем некая жесткая схема политической идеологии, в рамках фабианцы стремились бы к достижению определенных задач.

В четвертой главе, «Взаимосвязанность прогрессивных политических и литературных идеалов», в комплексном ключе освещаются различные аспекты литературного и общественно-политического наследия трех выдающихся фабианских деятелей: У. Морриса, Б. Шоу и У. Уэллса. В становлении раннего социалистического движения Великобритании, также как и самого Фабианского общества, неоспоримо большую роль сыграли отдельные выдающиеся представители литературной и интеллектуальной элиты своего времени. В ретроспективе, все трое - У. Моррис, Б. Шоу и У. Уэллс – олицетворяли отдельные этапы становления и формирования английского социалистического мышления. Концептуальные взгляды У. Морриса, превалировавшие на начальном этапе, в определенном смысле представляли собой «индивидуальное прочтение» социалистической теории, в основе которого лежало понимание «контекстной действительности», в то время как «практический социализм» являлся производным от идеологического идеального стереотипа. С другой

стороны, тип социализма, проповедуемый Б. Шоу, скорее представлял собой «аристократическое прочтение социализма», где главенствующее место занимали тезисы не научного и эмпирического порядка, а этические императивы – своего рода рефлексия на тему симбиоза демократа и аристократа. Б. Шоу прекрасно ощущал противоречивый характер наступающей эпохи и специфику миропонимания своего поколения, что не преминуло отразиться в творчестве великого писателя и публициста, в его «метаниях» между А.Бергсоном, Ч.Дарвином и Ф.Ницше. И именно в контексте такого интеллектуального поиска родился типично беранардовский концепт социализма индивидуального толка, получивший свое выражение в идейных образах супергероя и жизненной силы. Социализм, в понимании другого известного фабианца У. Уэллса, не мог базироваться на научных постулатах, поскольку сообщества пока не были готовы на практике принять преимущества академических выкладок на тему лучшего общества.

Пятая глава диссертационной работы, «От фабианского социализма к созданию лейбористской партии», состоит из двух параграфов («Профсоюзное движение и Независимая лейбористская партия» и «Создание и развитие Лейбористской партии»). Постепенное усиление политического влияния фабианцев получило свое развитие на уровне английского местного самоуправления; если число местных представительств Общества в 1892г. составляло 32, то уже 1893г. оно возросло до 74, включая отделения в Южной Австралии и Бомбее. Совместно с Независимой лейбористской партией Общество значительно консолидировало реальные рычаги влияния в реальной политической жизни Англии. Причем, если НЛП стала выразителем новых социально-политических веяний, то Фабианское общество взяло на себя роль своего рода мозгового центра лейбористов. Неудивительно, что в период Первой мировой войны и в 1920-ые гг. фактическими лидерами Лейбористской партией были фабианцы А. Хендерсон и С. Веб. Именно при А. Хендерсоне начался долгий процесс слияния Общества с Лейбористской партией. Наглядным примером предметного влияния фабианства на британский лейборизм в первой четверти 20-го века стало принятие идеологической основы фабианского социализма в качестве программной цели Лейбористской партии. Более того, «государственный» реформистский социализм фабианского толка, который в дальнейшем лег в основу европейского континентального социализма, свою первую адаптацию прошел на именно английской земле.

В Заключении диссертационной работы представлены основные выводы по рассмотренным проблемам. В частности, фабианское движение

оказало существенное воздействие на формирование социалистической политической платформы в Великобритании конца 19-го века – первой четверти 20-го столетия. Несмотря на свой изначально «интеллигентский» характер, Фабианское общества вскоре приобрело значительное влияние на политическую арену страны, а «фабианский социализм», фактически, в существенной степени способствовал упадку радикальных марксистских идей в британском обществе.

Salloum Abdul Hamid Fajr

The Fabian Movement and the Intellectual Scene of Great Britain
(Second part of the 19th century – first three decades of the 20th century)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World history" 07.00.02.
The Defense of the Dissertation will take place at 15.00 on July 6, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019, Yerevan, 24/4 Marshal Baghramyan, ave.

S U M M A R Y

The dissertation work is devoted to analyze and comprehensively present the complex historical-political overview of Fabian Society creation and development in the context of the most prominent Fabian intellectuals' and writers' political viewpoints and concepts exposition. The Fabian movement and later on Fabian Society establishment and activity as well as the political entrenchment process of Socialist ideology are viewed through the lens and within the context of English literary life; and the British political journalism, particularly those segments that were biased toward socialist and leftist mindset, came forward as a descriptive and explanatory framework in approaching and assessing the Fabians development as both political-philosophic ideology and policy-making "toolkit". The outlined academic problematic of revealing the "holistic" picture of intellectual and literary underpinning of the Fabian Society was exemplified on case-specific base, and only partly covered the complex mosaics of Fabian Society formation and development processes. The daunting demise of Victorian epoch in England, collapse of the traditional worldview that dominated the mindsets of generations over the decades and the substantive reevaluation of previous approaches actualized the necessity of intellectual and, to some extent, spiritual mobilization of social-political resources. The present academic undertaking is an attempt to reexamine the complexity of epochal transformation period of English history via meticulous study of literary scene' political and social aspects related to Fabian Society, exploration of the complicated, often contradictory nature of interrelationships between political and traditional cultural values that beset the society and the Fabian Society itself, reflect psychological and value-laden traits of those times, and point out the principal contribution of the new emergent political forces in final establishment of Labor party.

The thesis has a traditional structure, which includes an introduction, a body consisting five chapters, which are at the same time divided into paragraphs, a conclusion and a list of the used sources and literature.

The **First Chapter** "Origins of Fabian Socialism" addresses the contextual and ideological factors that shaped the future political and philosophical platform of the Fabian Socialism, contradictory character of social relations that was specific to the old Victorian epoch as well those major ideational driving forces which gradually undermined the traditional stability of English society. The generic overview in discursive manner explains the avenues and the social-political contexts for grounding of the leftist and socialist-oriented ideas in British Society. The major focus here is on mental and political-philosophical aspects besetting the society at the turn of the 19th century, predecessors of Fabians as the future legatees and proponents of British-type socialism, correlations between socially-based values and norms. The **Second Chapter** "The Birth of the Fabian Society" focuses on the two thematic aspects – creation of "New Life" Fellowship that later led to establishment of the Fabian Society and the analysis of the ethical values that were preached by the first prominent Fabians. Here are considered the basic motivations and the process of transition from "ethically-motivated" political struggle to legislative initiatives put forward by the Fabians who became actively involved in political debates at the local level. A characteristic feature of the historical period under consideration is the nascent demand of political consolidation of diverse positions and attitudes among the future Fabians aimed at achieving "social ideals". At the initial stage, the majority of young Fabians displayed some aptitude of being engaged more in passive forms of intellectual and ethical protest, while the political struggle was more comprehended and confined to ideational and polemical terms. Yet, in the second half of the 1890's an important transition occurred leading to the generic understanding that "socialist ideals" must be fixed via legislative acts to acquire bounding character.

The **Third Chapter** "The Basic Principles of the Fabian Socialism" devoted to the exploration of Fabian publications (mainly, Fabian essays), Fabian Society's ideological and political position regarding the Marxism and the methods of class struggle. A special attention is paid to examining the "permeation" policy by Fabians. In 1886 the Fabians finally rejected the Marxist postulates as well as revolutionary methods of political struggle. One of the most important thesis advocated by the Society proclaimed inadmissibility of social fragmentation that could potentially led to further polarization and clash of social interests. Moreover, the class struggle was discarded as an alternative to reach the socialist ideals. Instead, a prominent Fabian leader S.Webb (N5, "Facts about Socialism") emphasized an "aggregate" position of the Society that the future of the new social order had to be based on scientific and economic knowledge.

Fourth Chapter "The Relations of Progressive Political and Literary Ideals" specially dedicated to three famous Fabians – W. Morris, B. Show and H.

Wells. Here are presented the formation and development of the intellectual trajectories of those prominent Fabian personalities, their legacy on the Society as well as the main reasons of divergent views they advocated and propagated. The **Fifth Chapter**, "The Road from Fabianism to Labor Party" focuses on the main venues of influence and the modalities of political representation within the English trade-unionist movement, practical dimension of the Fabian "permeation" strategy at the level of local self-governance as well as ideological and policy-oriented impact of the Society in the process of Labor Party formation. Conjoining its political resources with the Independent labor party the Fabian Society considerably emboldened its influence and leverages upon British political life. While the ILP was embarked on the role of exponent of the new social-political transformations, the Fabian Society reserved a position of "brain center" where the major ideological trends were shaped. And there was no surprise that during the WWI and the years after the actual leaders of Labor Party were famous Fabians – A. Henderson and S.Webb.

The main research outcomes of the Ph.D. dissertation are summed up in the **Conclusion.** Specifically, Fabian socialism has left a substantial imprint on socialist platform formation in the Great Britain, while the Fabian movement effectively "dampened" political potential of radical Marxist and anarchistic ideologies in the British society. Despite its initially intellectual appeal and narrow social focus, during the first quarter of the 20th century the Fabians succeeded to transform themselves into the leading forces behind the Labor Party.